Արդշինբանկ

№ 652-13597

«19» 09 2019 թ.

ԵՐԱՇԽԻՔ N ԱԲԵՆ19/149-101

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և ԷՅԷՄՓԻՋԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք Պետության կարիքների համար «ԾԽԱԽՈՏ» տեսակի ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների կատարման պետական գնման N ՊԵԿ-ՀԲՄ-ԱՇՁԲ-19/11 պայմանագրից բխող կանխավճարի ապահովում:

2. Երաշխիքով «Արդշինբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) ՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 449,100,000.0 (չորս հարյուր քառասունինը միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչությունում բացված 900011054021 կամ 900011474666 բանկային հաշվին, կամ Բենեֆիցիարի կողմից տրված այլ բանկային հաշվին, փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի, երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է 20.09.2019թ.-ից մինչև 17.02.2020թ.-ը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրենվ ճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0015, Գր. Լուսավորիչ 13
(+37412) 222222
office@ardshinbank.am
www.ardshinbank.am

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ Երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իրիրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ 0.1% չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչպատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործառնական տնօրենի տեղակալ-
Վարկերի կենտրոնացված ձևակերպումների և
Ուղեկցման վարչության պետ Իրինա Աբրամյան

Գլխավոր հաշվապահ Հովհաննես Մկրտիչյան